

Լուսինե Գրիգորյան


Կասկածիր,
համեմատիր,
ճշտիր.

ինչպե՞ս

բացահայտել

և ստուգել կեղծ

տեղեկությունները





Գրքույկները մշակել է Մեղիա Նախաձեռնությունների կենտրոնը՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսավորմամբ իրականացվող «Մեղիան քաղաքացիների տեղեկացված մասնակցության համար» ծրագրի շրջանակներում:

«Մեղիազրագիտություն. հավելված» գրքույկների շարքը ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական միջավայրում մեղիազրագիտություն դասավանդողների համար է: Այն առաջարկվում է որպես լրացում «Մեղիազրագիտություն» ուսուցչի ձեռնարկի (Ինտերնյուս, 2013):

Գրքույկներից յուրաքանչյուրում ներկայացված է մեղիազրագիտության մի թեմա՝ ներառելով տեղեկություններ ու օրինակներ, վարժություններ ու մեթոդական ցուցումներ դասավանդողին:

Շարքում ներառված են հետյալ թեմատիկ գրքույկները

Գեղամ Վարդանյան
Լուրը,
լրագրությունն
ու
հասարակությունը

Գեղամ Վարդանյան
#ElectricYerevan-ի
լուսաբանումը
արտասահմանյան
լրատվամիջոցներում

Լուսինե Գրիգորյան
Մեղիա
զրագիտության
հինգ հարցերը.
ինչպե՞ս
վերլուծել
տեղեկությունները

Լուսինե Գրիգորյան
Կասկածի, համեմատի, ճշտի. ինչպե՞ս բացահայտել և ստուգել կեղծ տեղեկությունները

Մեսրոպ Չարությունյան
Լրագրողական էթիկան գործնականում. մեղիայի ինքնակարգավորման մեխանիզմները

Արմեն Սարգսյան
Watchdog
լրագրություն. հանրային շահերի պահպանանքը

Խմբագրական կազմ

Լուսինե Գրիգորյան
Նուրե Սարգսյան
Անահիտ Էվոյան


Ձևավորումը՝ Արթուր Մաշինյան, Citystudio

Տպագրված է «Չայրապետ հրատարակչություն» ՍՊԸ տպարանում

© Մեղիա Նախաձեռնությունների կենտրոն, 2019

ԱՄԿալիֆորնիանահանգի դպրոցներից մեկում հինգերորդ դասարանցիները պատմության բաց դաս էին անցկացնում՝ ներկայացնելով տարբեր պատմական կերպարների: Էնդին, որ Մագելանի դերն էր խաղում, հայտարարեց. «Ես նավարկել եմ աշխարհի շուրջ 1972 թվականին»: Ընկերների հարցադրումներին ի պատասխան՝ պնդեց, որ իր տեղեկությունը ճիշտ է, քանի որ Գուգլն է այդպես ասում: Այդ միջադեպը դրդեց ուսուցիչ Սքոթ Բեդլիին տեղեկությունների ստուգման դասընթաց սկսել դպրոցում:

Իսկ ի՞նչ կանեք դուք, եթե աշակերտի տնային հանձնարարությունը կարդալիս հայտնաբերեք կասկածելի ինտերնետային կայքերից մեջբերումներ կամ կեղծ նյութեր: Օրինակ՝ եթե ռեֆերատում աշակերտը սա ներկայացնի որպես Ալեքսանդր Պուշկինի լուսանկար ու պնդի, որ «Գուգլն է գտել սա»:





Այս նկարը ռուսական որոշ կայքերում ներկայացվում է որպես Պուշկինի միակ լուսանկարը: Սակայն, համեմատելով մի քանի պարզ փաստեր Պուշկինի կենսագրությունից ու լուսանկարչության պատմությունից կարելի է հասկանալ, որ նկարում չէր կարող ռուս մեծ գրողը լինել. Պուշկինը մահացել է 1837 թվականին, երբ Եվրոպայում լուսանկարչական առաջին լաբորատոր փորձարկումներն էին դեռևս արվում:

Ինտերնետի ժամանակաշրջանում երեխաներին հասնելի են հավաստի և ոչ այնքան հավաստի օնլայն հանրագիտարաններ, ինքնակոչ գիտնականների «հետազոտություններ», չստուգված, երբեմն էլ դիտավորությամբ խեղաթուրված փաստեր: Չճշտված կամ կեղծ տեղեկություններ հանդիպում են նաև լրատվամիջոցներում: Դրանք կարող են հեղինակի ու լրագրողի անփութության արդյունք լինել, բայց շատ դեպքերում տեղեկությունները կեղծվում են դիտավորյալ՝ սենսացիա ստեղծելու, մարդկանց ուշադրությունը գրավելու, դրանով գումար աշխատելու կամ հակառակը՝ որևէ բանից մարդկանց ուշադրությունը շեղելու ու շփոթեցնելու համար:

Սթենֆորդի համալսարանի Կրթության ֆակուլտետի 2016 թ. անցկացրած հետազոտությունը ցույց է տալիս, որ ուսանողները դժվարանում են տարբերել կեղծ կամ գովազդային տեղեկատվությունը լրատվությունից:

«Շատերը կարծում են, որ երիտասարդները վարժ տիրապետում են սոցիալական մեդիային, հետևաբար շատ լավ են հասկանում այն ամենը, ինչ այնտեղ գտնում են: Մեր հետազոտությունը հակառակն է փաստում»,- ասում է հետազոտական թիմի ղեկավար Սամ Վայնբուրգը:

Ճշմարտության խեղաթյուրումը մեդիայում նորությունն է, այդ մասին անգամ գեղարվեստական գրքեր, վեպեր կան: Դրանցից ամենահայտնին՝ Ջորջ Օրվելի «1984» վեպը, կրկին բեսթսելլեր դարձավ 2016-ին: Այդ տարի երկու աղմկահարույց քվեարկությունն եղավ. ԱՄՆ-ում նախագահ ընտրվեց Դոնալդ Թրամփը, իսկ բրիտանացիները քվեարկեցին ԵՄ-ից դուրս գալու օգտին (այս քվեարկությունը հայտնի է Brexit անունով): Երկու դեպքում էլ կեղծ տեղեկությունների ալիքն այնքան ուժեղ էր, որ, մասնագետների կարծիքով, կարող էր ազդեցություն ունենալ քվեարկության ելքի վրա: Կան նաև օրինակներ, թե ինչպես են նախընտրական կեղծիքները ազդել սովորական մարդկանց կյանքի վրա:

2016-ի դեկտեմբերին Վաշինգտոնում մի քաղաքացի ձերբակալվեց, ով հրազենային կրակ էր բացել ռեստորաններից մեկում. նա ինտերնետային կայքերում կարդացել էր, թե ԱՄՆ նախագահի դեմոկրատ թեկնածու Դիլարի Բլինթոնը հենց այդ ռեստորանի նկուղում պահում է անչափահասների, որոնց ենթարկում է սեռական շահագործման: Քաղաքացին, ով 2 երեխաների հայր էր, խիստ անհանգստացած



այդ տեղեկությունից, 6 ժամ ճանապարհ էր անցել մեղավորներին պատժելու համար և ձերբակալվել էր: Երեխաների շահագործման որջև այդպես էլ չէր հայտնաբերվել, քանի որ ինտերնետային հոդվածի տեղեկությունները հորինված էին:

Տեղեկության հուզականությունը, մարդկանց էմոցիաների հետ խաղալն արդեն Նշան է, որ հնարավոր է՝ կեղծ է կամ չափազանցված: Նման իրավիճակներում կողմնորոշվելու համար ուղեցույցներ ու հուշումներ են մշակվել:

Հրատապ նորությունների սպառողի ուղեցույց՝ կեղծ լուրերը բացահայտելու համար»

1. Կեղծ լուրերի թիվ մեկ ցուցիչը ՄԵԾԱՏԱՌԵՐԸ և ակնհայտորեն մշակված լուսանկարներն են:
2. Փոփ-ափ գովազդ և թարթող գունավոր հղումներ. մեծ հավանականությամբ հոդվածը քլիք-բեյթ է (նպատակ ունի լսարանից քլիք հավաքել և դրանով ավելացնել կայքի գովազդի ծավալը):
3. Ստուգեք կայքի հասցեն. կեղծ կայքերը հաճախ նմանակում են հայտնի կայքերի հղումներին՝ դրանց ավելացնելով որևէ վերջավորություն, օրինակ՝ «.co»:
4. Եթե կայքն անծանոթ է, փորձեք գտնել և ստուգել «Մեր մասին» բաժինը: Ապա կայքի անվամբ Գուգլի որոնում արեք՝ ավելացնելով «կեղծ» բառը:
5. Եթե նյութում կան այլ հղումներ, դրանք էլ ստուգեք: Եթե չկա որևէ հղում, դա էլ մտածելու առիթ է:
6. Ստուգեք կասկածելի լուրը հեղինակավոր լրատվամիջոցի՝ նույն թեմայով հրապարակումների հետ համեմատելով:

7. Ստուգեք հրապարակման ամսաթիվը. սոցիալական ցանցերում հաճախ են տարածվում հին պատմություններ:

8. Մի սահմանափակվեք վերնագրով, կարդացեք/դիտեք նյութը, որը կարող է բացարձակ չհամապատասխանել վերնագրին:

9. Լուսանկարները կարող են շփոթեցնել. փորձեք գտնել նկարի սկզբնաղբյուրը ինտերնետային որոնումներով (reverse image search)՝ օգտագործելով Գուգլ կամ TinEye որոնողական համակարգերը:

10. Ի՞նչ էմոցիաներ է արթնացնում: Եթե նյութը ձեզ հունից հանում է, գուցե հենց դրա համար էլ գրվել է:

Ուղեցույցը պատրաստել էր WNYC օնլայն ռադիոն:

Հաճախ կեղծ լուր են անվանում նաև մուլտիցենոզ վերնագրերը, որոնք չեն համապատասխանում հոդվածի բովանդակությանը, կամ կողմնակալ լուրերը, որոնք ոչ լրիվ են ներկայացնում իրավիճակը, հումորային գրառումները, որոնք սխալմամբ ընդունվում են որպես փաստ:

Օրինակ՝ 2015 թվականի ապրիլի 1-ին տարածվեց տեղեկություն, թե Թումանյանի հայտնի պատմվածքի հերոսը՝ Գիթորը, ոչ թե գրական կերպար է, այլ իրական մարդ, ով ոչ թե մահացել է թոքաբորբից, այլ մեծացել ու դարձել է քրեական հեղինակություն: Այս «բացահայտումն» արել էր Ֆեյսբուքյան օգտատեր Կարեն Միրզոյանն, ում գրառումը տարածեցին ոչ միայն նրա ընկերները, այլև որոշ լրատվական կայքեր ևս: Այս դեպքում, հումորային կատակը որպես իրականություն ներկայացվեց և դարձավ կեղծ տեղեկություն:

Լուսանկարները ստուգելու գործիքները տարբեր են, բայց սկզբունքները նույնն են՝ կասկածել, համեմատել, ստուգել աղբյուրը, գտնել լրացուցիչ տեղեկություններ:

Փորձեք գտնել լուսանկարի տարածման սկզբնաղբյուրը ու համոզվել, որ տարածողը հենց նկարի հեղինակն է:

Համադրեք լուսանկարն ու դրան ուղեկցող տեքստը, արդյո՞ք չկա հակասություն եղանակի, միջավայրի, ժամանակաշրջանի առումով. ուշադիր զննեք լուսանկարի դետալները, դրանք սովորաբար շատ բան են հուշում:

Լուսանկարը ներբեռնեք Գուգլի պատկերների որոնման համակարգում (Google reverse image search) ու փորձեք Գուգլ-ի օգնությամբ պարզել, թե այն ուրիշ ի՞նչ համատեքստում է հայտնվել և ե՞րբ է տարածվել առաջին անգամ: Համեմատե՛ք տեղեկությունները:

Տեսանյութերի դեպքում որոնման նույն մեթոդը կարելի է կիրառել՝ տեսանյութից արված մի քանի պատկերի միջոցով (screenshot):

Առաջադրանք 1.

Այս նկարը պարբերաբար տարածվում է սոցցանցերում՝ որպես Դիլիջանի լուսանկար, այնինչ իրականում արված է ճապոնիայում:



Ցույց տվեք նկարը աշակերտներին ու հարցրեք.

✓ Արդյո՞ք սա Դիլիջանում է:

«Այո» պատասխանի դեպքում քննարկեք, թե ինչու են այդպես կարծում: «Ոչ» պատասխանողներին խնդրեք բացատրել ու հիմնավորել պատասխանը: Փորձեք աշակերտների հետ վերլուծել նկարը:

Հարցրե՞ք.

- ✓ Արդյո՞ք սա իսկապես նման է Դիլիջանի ոլորաններին՝ համաչափությամբ ու բնությամբ:
- ✓ Արդյո՞ք Դիլիջանի ճանապարհին բնորոշ է մեքենաների այս քանակը:
- ✓ Ո՞ր ուղղությամբ են գնում մեքենաները (սկարում երթևեկությունը միակողմանի է՝ միայն դեպի վեր, և ձախակողմյան է, քանի որ սա ճապոնիան է, իսկ Հայաստանում երթևեկությունը աջակողմյան է):

Այս դետալները քննարկելուց հետո հարցրեք, թե ինչպես կարող են պարզել, ի վերջո, նկարը կեղծ է, թե իրական: Առաջարկեք նրանց Գուգլ-ի հետադարձ որոնում անել, այսինքն՝ Google images նկարների որոնողական համակարգում կցել հենց այս նկարը և տեսնել, թե ինչ արդյունքներ կբերի համակարգը: Ստուգեք նաև Գուգլի առաջարկած հղումները:

Օրինակի վերլուծության մանրամասները՝ Media.am կայքի՝ «Շատ գեղեցիկ լուսանկար, բայց ոչ Դիլիջանում հողվածում» (<https://media.am/not-in-dilijan>):

Առաջադրանք 2.

Հանձնարարեք աշակերտներին խաղալ «Լիտերատուսի արկածները» ուսումնական խաղը (literatus.media.am), որն օգնում է զարգացնել կեղծ տեղեկությունները բացահայտելու և դրանք ստուգելու հմտությունները: Կարող եք նաև խաղի մի քանի փուլ խաղալ ամբողջ դասարանով՝ հենց դասի ժամանակ:

Այլ օրինակներ քննարկման ու վարժությունների համար

**«Արագ արձագանքման ծուղակները «Քայլ արա»
շարժման ընթացքում»**

<https://media.am/misinformation-trap>

«Ստուգիր մինչև գրելը, տարածելը, լայքելը»

<https://media.am/ugc-content-verification-cases>

**«Երբ ֆիլտրերը չեն աշխատում. խավարում «Արմ-
Նյուզ»-ի եթերում»**

<https://media.am/darkness-of-news-verification>

«Փորձենք «կարդալ» լուսանկարները»

<https://media.am/photo-verification-cases-and-advice>

**«Աֆրիկական կոկորդիլոսները
հայկական ՁԼՄ-ներում»**

<https://sut.am/archives/1053>

**«Քաղաքապետարանը ստում է, ՅՈՒՆԵՍԿՕ-ն «կուլ է տալիս»,
իսկ հաշմանդամություն ունեցողները զարմանում են»**

<https://sut.am/archives/2009>

Օգտագործված նյութեր և օգտակար հղումներ

**Տեղեկությունների ստուգում. բուհական
դասընթացի մեթոդական ուղեցույց**
<https://media.am/news-verification-handbook-for-universities>

Պատկերների ստուգման ուղեցույց
<https://media.am/verified-handbook-armenian>

**Տեղեկությունների ստուգման համառոտ
ուղեցույց լրագրողների համար**
https://media.am/verification-guide-foldout_arm

**Արագ տարածվող կեղծ լուրերը՝
սոցիալական մեդիայում**
<https://media.am/misinformation-and-fake-news-on-social-media>

WNYC, ուղեցույց
<https://www.wnyc.org/story/breaking-news-consumer-handbook-fake-news-edition>

**Կարեն Միրզոյանի ֆեյսբուքյան գրառումը
Գիքորի մասին**
<https://www.facebook.com/areg.stepanyan.52/posts/633823726751214:0>

**Տաքթչեք, տեղեկությունների ստուգմամբ
զբաղվող նախագիծ**
<http://www.factcheck.org/2016/11/how-to-spot-fake-news/>

**Սնոփս, տեղեկությունների ստուգմամբ
զբաղվող կայք**
www.snopes.com

**Բելինգքեթ, զբաղվում է կասկածելի
տեղեկությունների ստուգմամբ և
բաց տվյալների ուսումնասիրությամբ**
www.bellingcat.com

**«Լիտերատուսի արկածները»
համակարգչային ուսումնական խաղ**
literatus.media.am

**I taught my 5th-graders how to spot fake news.
Now they won't stop fact-checking me**
<https://bit.ly/2p7nX9v>

**Фотофальшивка: «прижизненный снимок»
Пушкина расходится по соцсетям**
www.aif.ru/society/history/38573

**Stanford researchers find students have trouble
judging the credibility of information online**
<https://stanford.io/2gGjag7>



Նշումների համար



Մեղիագրագիտություն. հավելված

Լուսինե Գրիգորյան
Կասկածի,
համեմատի,
ճշտի.
ինչպե՞ս
բացահայտել
և ստուգել կեղծ
տեղեկությունները

